ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ռաֆֆու <<Սամվել>> պատմավեպի ուսուցումը

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Ամալյա Ամիրաղյան

ԽՈՒՄԲ՝ Հայոց լեզու և գրականություն

ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լիլիթ Մարկոսյան

ԵՂԵԳՆԱՁՈՐ
2 0 22 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր օրերում Հայաստանում շատ բարեփոխումներ են տեղի ունենում, որոնցից ամենակարևորը կրթության բովանդակային բարեփոխումների փուլն է: ՀՀ կառավարությունը հավանություն է տվել կրթության բովանդակության և ուսուցման նոր ռազմավարության հիմնարար փաստաթղթին՝Հանրակրթության պետական կրթակարգին, որը ուսուցիչների գործունեության առանցքային ուղենիշներից մեկն է :Կառավարության հավանությանն է արժանացել նաև պետական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը,ինչպես նաև միջնակարգ կրթության պետական չափորոշիչը:

Այդ փաստաթղթերով պետությունը սահմանում է իր ակնկալիքները հանրակրթությունից՝կարևորելով գիտելիքների, հմտությունների, կարողությունն-

ի , արժեքների այն համակարգը, որոնց ձևավորման ուղղությամբ աշխատելու ենք մենք՝ ուսուցիչներս, քանզի մենք ենք պատրաստելու պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ քաղաքացի:Այս համակարգը որոշակի ազատություններ է ընձեռում ուսուցիչներին:

Նրանք զգալի ինքնուրույնություն, ստեղծագործական մոտեցումներ կարող են դրսևորել կրթական միջոցներն ընտրելու գործում:Պետության որդեգրած այս քաղաքականությունն էապես մեծացնում է ուսուցիչների պատասխանատվությունը: Հանրակրթության առջև խնդիր է դրված ձևավորել ողջ կյանքի համար կիրառելի գիտելիքներով, կարողություններով, արժեքներով օժտված անհատներին:

ՈՒսուցչի առջև խնդիր ծառացավ մշակելու որոշակի տեխնոլոգիաներ, մեթոդներ՝ նյութի յուրացումը սովորողներին մատչելի դարձնելու համար:

Այս նպատակին հասնելու կարևոր գործոններից մեկը ակտիվ մեթոդներով ակտիվ

ուսուցման կազմակերպումն է:Դրա կարևոր նախապայմաններից մեկը աշակերտակենտրոն դասն է,որտեղ աշակերտը ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցն է:Համատեղ գործունեության արդյունքում ձեռք է բերվում գիտելիք և կարողություն:ՈՒսուցիչը պետք է հնարավորինս քիչ խոսի՝ հնարավորություն տալով խոսելու և բարձրաձայն մտածելու աշակերտին:Ինչպես ասում էր Պեստալոցին.,ՈՒսուցումը պետք է աշակերտին ոգևորի և խթանի նրա կարողությունները, ներուժը ,այլ ոչ թե շփոթեցնի տեղեկությունների ,գիտելիքի հոսքով:

Գրականության մեթոդների և հնարների մասին խոսելուց առաջ պետք է նշել, որ այսօր կարևորվում է ոչ միայն գիտելիքների հաղորդումը, այլև գրագետ, կապակցված խոսք մշակելու կարողությունը,հետազոտական ինքնուրույն աշխատանքի միջոցով ստեղծագործական երևակայության զարգացումը:

Մեթոդների ընտրությունը կատարում է ուսուցիչը՝ ելնելով նպատակադրումից:

Այսօր առավել ևս ավագ դպրոցում դասավանդող ուսուցչի առջև դրված է հայեցի կրթության և դաստիարակության ,ազգապահպանման,ազգային արժանապատվու-

թյան բարձրացման խնդիրը:Այդ տեսանկյունից Ռաֆֆու ,Սամվելե պատմավեպի ուսուցումը և կերպարների ճիշտ բնութագրումը կարող է նպաստել դեռահասի

ճանաչողական, տրամաբանական կարողությունների և հմտությունների զարգաց-
մանը և բարոյական կերպարի ձևավորմանը:

ՐԱՖՖՈՒ <<ՍԱՄՎԵԼ>> ՊԱՏՄԱՎԵՊԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ավագ դպրոցում պատմագեղարվեստական երկի ուսումնասիրությունը գաղափարական և հոգեբանական հարստության ընկալումով սովորողի մեջ ձևավորում է իր ժողհովրդի կյանքն ու ճակատագիրը ըմբռնելու կարողություն:

Քննարկումներին ակտիվորեն մասնակցելու և սեփական ըմբռնումներն արտահայտելու տեսակետը աշակերտին հնարավորություն է ընձեռում բազմակողմանիորեն բնութագրել գրական հերոսներին, գտնել նրանց ընդհանրությունները և տարբերությունները, հոգեբանորեն բացատրել արարքների դրդապատճառները և շարժառիթը:

Ուստի անուրանալի է, Հայ գրականությունե առարկայի ճնաչողական և դաստիարակչական դերը սովորողի հոգևոր ներաշխարհի կերտման, ինքնուրույն մտածողության զարգացման գործում:

Միջառարկայական կապերի ստեղծմամբ ինտեգրված ուսուցումն այս պարագայում իրականացնում է երկու կարևոր խնդիր.

1. գրական ստեղծագործության հիմնական գաղափարի ընկալում

2. ժողովրդի պատմության ճանաչողական և պատմության ու գրականության փոխկապակցվածության ըմբռնում

Արդյունքում խթանվում է աշակերտների հետաքրքրությունը գրական երկի նկատմամբ, ձևավորվում է ազգային բարձր արժանապավություն, համամարդկային մշակույթի մեջ իր արժանի տեղի ըմբռնում և ստեղծագործական մոտեցում կենսական խնդիրներին:

Այս հանգամանքը նկատի ունենալով՝ պատմավեպի կերպարն ուսուցանելիս պետք է լայնորեն օգտագործել միջառարկայական կապերը, որոնք կխթանեն աշակերտի ակտիվ մասնակցությունը և կապահովեն ուսուցման արդյունավետությունը:

Երբ պարզում ենք, որ աշակերտները որոշակի պատկերացում ունեն վեպի գաղա փարական բովանդակության մասին,անցնում ենք գլխավոր կերպարների վերլուծությանը: Նախ՝ հարցնում ենք, թե որ կերպարներն են ավելի շատ դուր եկել և ինչու՞ հատկապես այդ կերպարները: Հետո հարկ ենք համարում նշել, որ <<Սամվելը>> առաջին ռոմանտիկ պատմավեպն է:

<<Ռոմանտիկները տառապում էին դարի ցավերից: Մեծ ուշադրություն էին դարձնում իրական կյանքում եղած աղքատության վրա և այն վերացնելու համար ներշնչվում էին իդեալական, կատարելատիպ հերոսի գաղափարով, որը պետք է վե-րացներ այդ աղքատությունն ու անարդարությունը>>[1]:

Ռաֆֆու «Սամվել» պատմավեպում հեղինակի գրական կերպավորման արվեստը ն երկայացնելուց առաջ անհրաժեշտ է անդրադառնալ վերջինիս գրականագիտակա ն մեկնաբանությանը:

«Կերպար-գրական- գեղարվեստական երկի մեջ հանդես եկող անձնավորություն, որն ունի իր բնավորության և վարքագծի որոշակի հատկանիշներ :

... Կերպարը ենթադրում է մարդկային բնավորության գծերի խտացում, որոնք բացահայտում են նրա անհատականությունը և տիպական նշանակությունը>>[2] :

Այսքանից հետո հավելում ենք, որ Ռաֆֆու ստեղծած կերպարները մեծ մասամբ աչքի են ընկնում իրենց ուժեղ և հպարտ բնավորությամբ և ազատության համար պայքարելու հզոր կամքով, որոնք հատկանշական են ռոմանտիզմին: Կերպարների բնութագրականը տալու ժամանակ անհրաժեշտ է սովորողներին մղել հետազոտական ինքնուրույն աշխատանքի: Զգտում ենք հասնել այն բանին, որ աշակերտներն իրենք բնութագրեն վեպի կերպարները, կատարեն պատկերավոր և տրամաբանական իմացության միահյուսում:

Բնութագրելիս կարևորում ենք հետևյալ հարցադրումները.

- կերպարների հասարակական ծագումը,նրանց ով լինելը
- արտաքին նկարագիրը
- գործունեությունը
- նրանք՝ ընտանիքում և հասարակական կյանքում

նրանց հոգեբանական խառնվածքը, վերաբերմունքը ժամանակաշրջանի հուզող խնդիրների նկատմամբ

- նրանք և հայրենիքը, ժողովուրդը
- անձնական և հասարակական շահերը
- հեղինակի վերաբերմունքը նրանց նկատմամբ , ի՞նչ շահեր է հետապնդում
- պրոբլեմային առաջադրանքներ
- կերպարի արդիական հնչեղությունը
- գրական կերպարի նկատմամբ անհատական քննադատական կարծիքի ձևավորում

---

[1] Ա.Դոլուխանյան, Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2006 :

[2] Էդ. Ջրբաշյան, Հ. Մախչանյան, Գրականագիտական բառարան, Երևան, 1972, էջ 142:

Մեր նպատակն է հասնել նրան , որ սովորողները
ձեռք բերեն գրական հերոսին նկարագրելու,նրա դիմանկարը կազմելու
,մարդկայինը տեսնելու և գնահատելու կարողություն:

Ամփոփելիս հանդիմանական կամ կշտամբանքի խոսքեր չենք ասում սխալվողին,

ավելին՝ օգնում ենք՝ անկաշկանդ արտահայտելու իր մտքերը:

Սամվելը վեպի կենտրոնական դեմքն է, որի անունով էլ կոչվում է պատմավեպը: Ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ հեղինակը Սամվելի արտաքին նկարագրից ուղի է հարթում նրա ներքինը, բացահայտում վարքագիծը, նկարագրում կերպարի ապրումների ներքին բարդ խաղը, հետագայում անդրադառնում գործելակերպին: Հետո պահանջում ենք վերհիշել, թե երբ են առաջին անգամ տեսնում նրան: Ընթերցում ենք հատվածը. ,Մի լայն, ասրյա վերարկուի մեջ ամփոփված էր նա , բայց գլխի երկար գիսակները, գագաթից իջնելով, մեղմ ալիքներով սփռվել էին թիկունքի վրա և երբեմն սքողում էին նրա գեղեցիկ, գունաթափ դեմքը: Նրա անհանգիստ մատները անդադար ոլորում էին փոքր - ինչ ուռած, կարմրագույն շրթունքի նորաբույս ընչացքը,թեև ոլորելու շատ պաշար չէին գտնում: Այդ ցույց էր տալիս սրտի խորին խռովությունը: Իսկ սևորակ, նշաձև աչքերի մեջ նշմարվում էր մի անբացատրելի վրդովմունք: Քսանհինգ տարեկան հազիվ կլիներ նա՝ նուրբ կազմվածքով և փոքր – ինչ մուգ - դեղնագույն դեմքով, որ պահպանվել էր նրա մեջ ժառանգական արյունից :

Երիտասարդը Վահան Մամիկոնյանի որդի Սամվելն էրե[1]:

Ծանր դրամատիկական վիճակում է գտնվում Սամվելը վեպի առաջին իսկ

գլուխներից. հայրը՝ Վահան Մամիկոնյանը, քեռին՝ Մերուժան Արծրունին, դավա -

ճանաբար թշնամու կողմն են անցել: Նրանց հավատարմորեն հետևում է մայ-

րը: Սամվելին սփոփում է հայրենիքի նկատմամբ ցուցաբերած անկաշառ սերը: Կերպարն ավելի տեսանելի դարձնելու համար ավելացվում է՝ ազնիվ ու խոր հայրենասիրությունը Սամվելի մոտ զուգակցվում է նույնքան բուռն ժողովրդասիրությամբ:

Նրա առաջ կանգնած են երկու մեծություն՝ ծնող և հայրենիք: Որի՞ն գերադասություն տալ…

---

[1] Ռաֆֆի,Սամվել,Երևան,1981, էջ 16 -17:

,Նա սիրում էր յուր հորը,սիրում էր որդիական ջերմ, անկեղծ սիրով: Բայց սիրում էր և յուր հայրենիքը: Նրա կրթությունը այնպիսի անձանց խնամքով էր կատարվել, որ պատրաստել էին նրանից մի անձնվեր որդի՝ նախ հայրենիքի և ապա ծնողացե[1]:

Որպեսզի սովորողներն ավելի ճիշտ ընկալեն հերոսի հոգեկան ապրումները և կարողանան հասկանալ ու գնահատել արարքի դրդապատճառները, դասարանին առաջարկվում է դիտել և քննարկել հետևյալ պրիզման:



Ապագա սերունդը երկու մեծություններից կընտրի հայրենիքը:Աշխենի սերը ևս Սամվելին հերոսության, անձնազոհության է մղում. << - Դու ինձ արժան չես լինի, ՍամվեԲ, եթե քո արյունը չխառնես այն անբավ արյ ան հեղեղների հետ, որ պիտի թափվեն մեր աշխարհի ազատության համար>>[2]:

---

[1]·Ռաֆֆի,Սամվել, էջ24:

[2]·Ռաֆֆի,Սամվել,էջ 249:

ԵՎ Սամվելը կատարում է բարոյական իր սխրանքը: Նշվում է նաև հեղինակի կատարած շեղումը՝ կապված մոր սպանության հետ:

ՈՒսուցչի առջև ծառանում է մի դժվարին խնդիր. ,Կարո՞ղ է ուսուցիչը աշակերտի մեջ սեր արթնացնել Սամվելի նկատմամբ,որպեսզի հայրենասիրության վեհ գաղափարը չնսեմանա ծնողասպանության ահավոր մեղքից: Սա ի դեպ Շեքսպիրի ողբերգություններին հատուկ բարդ իրավիճակ է և պահանջում է շատ նրբին մոտեցումե[1]:

Բերվում է գրականագետի մեկնաբանությունը. ,Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ազգի ու պետության ճակատագրական պահի հոգեբանությանը,

որը վեր է սենտիմենտալ հուզականությունից[2]:

,Ինչպե՞ս կգնահատեք Սամվելի արարքը հարցադրումից հետո կիրառվում է

,Սուր անկյուններ մեթոդը:

Գրատախտակին գծվում է եռանկյուն, անկյուններում 3 տարբեր գույնի թերթերի

վրա գրվում նրա արարքը գնահատող 3 տեսակետներ:

Ապա աշակերտներին առաջարկվում է վերցնել սեղանին դրված այն գույնի

թերթիկը, որը ներկայացնող համապատասխան տեսակետը իրենք պաշտպա-

նում են: Միևնույն գույնի թերթիկն ընտրած աշակերտները կազմում են խմբեր:

Խմբերը որոշում են իրենց դիրքորոշումն ամրապնդող փաստարկները, ընտրում իրենց խոսնակներին, որոնք պետք է ներկայացնեն իրենց խմբի կարծիքները

բանավեճի ընթացքում:

[1] Ռ.Դոլուխանյան, Պատմավեպի ուսուցումը ավագ դպրոցում, Երևան, 2004, էջ27:

[2] Հ.Բախչինյան, Ս.Սարինյան,Հայ գրականություն,դասագիրք հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի համար,Երևան, 1993, էջ 347:

Քննարկման ընթացքում մասնակիցները կարող են փոխել իրենց կարծիքները և տեղափոխվել այլ խումբ: Քննարկումից հետո խմբերից յուրաքանչյուրը հանրագումարի է բերում իր դիրքորոշումը և այն հիմնավորող փաստարկները:

Վահան և Վասակ Մամիկոնյանների կերպարները բնութագրելիս հարկ ենք համարում օգտվել « Վենի դիագրամից»:

Վասակ Մամիկոնյան Վահան Մամիկոնյան

Ուսուցման այս նոր մեթոդի կիրառումը տեսանելի է դարձնում Մամիկոնյան եղբայրների ընդհանրությունները և առանձնահատկությունները:

Սրի ու բազկի, խելքի ու հնարագիտության կարողությունները զարմանալիորեն ներդաշնակորեն են դրսևորվում Վասակի մոտ: Հերոսական է նաև նրա պատասխանը. «...Լսի՛ր, արքա, ես այն Վասակն եմ , որ մի հսկա էի... երբ աջ ոտքիս վրա էի հենվում, աջակողմյան լեռը գետնի տակն էի տանում, իսկ երբ ձախ ոտքիս վրա էի հենվում, ձախակողմյան լեռը գետնի տակն էի տանում»[1]: Հեղինակը Վահան Մամիկոնյանի արտաքին նկարագրից ասես ճանապարհ է հարթում դեպի նրա կերպարի բացահայտումը: Վահան Մամիկոնյանի դեմքն արտահայտում էր հաստատամիտ մարդու և՛ համառությունը, և՛ անգթությունը, երբ այդ պետք էր:

«Ի՞նչ բնույթ էր կրում նրա դավաճանության շարժառիթը» հարցին սովորողները

[1] Ռաֆֆի,Սամվել,էջ19:

պատասխանում են՝ այն ուներ անձնական բնույթ: Գեղեցիկ կնոջ միջոցով Շապուհը որսաց Մամիկոնյան նախարարներից մի հավատարիմ գործակից:

Իրար լրացնելով՝ հավելում են, որ որդու՝ Սամվելի նկատմամբ տածած սերը ևս ներծծված է փառասիրական զգացումներով: Համագործակցային աշխատանքի արդյունքում բերված փաստարկները ցույց են տալիս, որ, իրոք, հերոսն իր ընտրած ճանապարհի անկոտրում ուղևորն է և կարող է իր գաղափարական հակառակորդների նկատմամբ վարվել մահվան անողոքությամբ:

«...Ով որ մեզ հակառակ է, մեզանից չէ: Մենք անխնա պատժել գիտենք այնպիսիին»:[1]

Հաջորդ փուլում այս գաղափարի շուրջ տալիս ենք պրոբլեմային առաջադրանքներ.

- ✓ ի՞նչ է դավաճանությունը
- ✓ կարո՞ղ ես ներել դավաճանին

Բանավիճելիս պետք է հարգել ընկերոջ կարծիքը, չպարտադրել սեփականը: Հարցադրումը աշակերտներին մղում է աշխույժ քննարկման: Ձգտում ենք հասնել նրան,որ արհամարհեն և մերժեն այն մարդուն, որը կյանքում գործում է սոսկ եսասիրության մղումով:

«Հասարակական այս խոշոր տեղաշարժերի և ճակատագրական իրադարձությունների ֆոնի վրա միայն հասկանալի են դառնում Գոգոլի «Տարաս Բուլբան», Հյուգոյի «Իննսուներեքը», Վոյնիչի «Բոռը»»:[2]

Աշակերտները, իսկապես, մերժում են դավաճանին և համամիտ են գրականագետի կարծիքի հետ.

«Վահան Մամիկոնյանը վեպի ուժեղ, կենդանի կերպարներից է: Նրա անկումը՝ դավաճանական շարժման անխուսափելի կործանման խորհրդանիշը»:[3]

---

[1] Ռաֆֆի, Սամվել, էջ 463:

[2] Ս. Սարինյան, Ռաֆֆի,ՀՀ ԳԱԱ հր., Երևան,1957, էջ 313:

[3] Ե. Պետրոսյան, Ռաֆֆի, Երևան, 1959, էջ 417:

Աշակերտներին տեսանելի դարձնելու նպատակով ճիշտ կլինի համապատասխան զուգահեռներ տանել մայր-որդի երկու տարբեր փոխհարաբերությունների վրա.



Այս սխեմայի կիրառումը ընդմիշտ կամրապնդի հարցի հոգեբանական խոր վերլուծությունը:

Թեմային առնչակից է նաև Մերուժան Արծրունու կերպարը: Նա վաստակել է բոլորի ատելությունը Շապուհի քրոջ՝ Որմիզդուխտի հանդեպ ունեցած սիրո պատճառով: Նա ուրացող է և մերժված բոլորից:

Նա ինքն է իր դատավճիռը կարդում.«Իմ քաղաքացիքը,- մտածում էր նա,- երես են դարձրել ինձանից... նրանք իմ վրա նայել անգամ չեն կամենում... Նրանք ինձ մեռած են համարում, այո՛, բարոյապես մեռած...»:[1]

Անպայման աշակերտներին ասվում է, որ Ռաֆֆին դավաճաններին փորձում է դուրս բերել մոլորությունից. « ...Եթե դու կամենում ես կրկին վայելել քո ընտանիքի և քո աշխարհի սերը, պետք է դառնաս չար ճանապարհից»:[2]

Աշակերտները կարդում են ևս մեկ հատված.« ... Լսի՛ր, հա՛յր, ընդունի՛ր տառապյալ որդուդ աղաչանքը, մի՛ արատավորիր Մամաիկոնյանների պայծառ անունը հավիտենական ամոթով: Դեռ ուշ չէ...»:[3]

---

1. Ռաֆֆի, Սամվել, էջ 287:

2. Նույն տեղում, էջ 288:

3. Նույն տեղում, էջ 462:

Շատ խորհրդանշական է տրված հատվածի նշանակությունը. «Նա լիզում էր յուր սեփական արյունը, որ լճացել էր գետնի վրա... »:[1]

Տեղին ենք համարում աշակերտներին ասել, որ այս տեսարանով հեղինակը ցույց է տալիս՝ դավաճանները խմում են սեփական ժողովորդի արյունը:

Հարմար առիթ է խորհրդանիշների իմաստը բացատրելու համար. «Պատմագեղարվեստական երկի մեջ գրողի երևակայությամբ ստեղծված հնարածո հանգամանքները պետք է օրգանական կապի մեջ գտնվեն պատմության հետ»:[2]

Վեպում կան Սամվելին լրացնող այլ սիրելի կերպարներ՝ Մ. Մաշտոց և Ս. Պարթև: Հարկ է ասել՝ ժամանակավրեպ են կերպարները: Գուցե պատմավիպասանը կամեցել է նրանց ներկայությամբ հայրենասեր այս կերպարներին հավաքել մի տեղ:

Նշված կերպարները նկարագրելու, նրանց գրական դիմանկարը ներկայացնելու աշխատանքը կատարում են հիմնականում աշակերտները: Դա տալիս է նաև փաստերն ինքնուրույնաբար դիտելու, ճանաչելու և տրամաբանելու կարողությունների զարգացում: Նաև լավ հնարավորութնուն է ընձեռվում երանելի այս այրերի մասին ունեցած տեղեկություններն իրազեկելու:

Դասարանը բաժանում ենք խմբերի և հանձնարարում աշխատել «Կանխագուշակումների աղյուսակի» վրա:

Կանխագուշակումների աղյուսակ

Բնույթը	Ի՞նչ փաստեր ունեմ	Ի՞նչ որոշեցին	Ի՞նչ եմ ակնկալում	Ի՞նչ եղավ
Մ.Մաշտոց-մտքի մարդ Ս.Պարթև-հավատի մարդ	հունական, պարսկական, ասոր. դպր. Եկ. արարողութ.՝ օտար լեզվով	Վերստեղծել մոռացված տառերը: Եկեղեց. Ընթերցվածները՝ հայերեն:		

[1]. Ռաֆֆի, Սամվել, էջ 496:

[2]. Վ. Նալբանդյան, Գորդը և պատմությունը, Երևան, 1970, էջ 63:

Վեպում Մաշտոցի կերպարն անավարտ է և հետագա մասերում, երբ զենքերն են շաչում, նա այլևս չի երևում, բայց դա չի խանգարում նրա մասին ամբողջական պատկերացում ունենալու համար:

Մ.Մաշտոցի և Ս.Պարթևի կերպարներն ամբողջական դարձնելու համար պահանջում ենք տանը գրել ռեֆերատներ՝ ըստ Մ.Խորենացու«Հայոց պատմություն» մատյանի և Կորյունի «Վարք Մաշտոցի» վարքագրության:

«Սամվել» պատմավեպում կարևոր են նաև մյուս կերպարները,նույնիսկ նրանք,որոնք չեն էլ առնչվում Սամվելի հետ: Դրանցից են Արշակ Երկրորդը և Փառանձեմ թագուհին:Բուզանդի պատմության մեջ Արշակը հզոր է ներքին ուժով, հայոց գահը ուժեղացնելու աներեր կամքով, սիրված է ժողովրդից: Պատմիչի այս բնութագրականները փոխանցվել են «Սամվելում» պատկերված Արշակին: Նա Շապուհի դավադիր քաղաքականության զոհն է:

«Անձնական վիշտ» և «հայրենիքի բախտ» թեմաների քննարկման շուրջ տրվում են սպառիչ պատասխաններ, և ընթերցվում է համապատասխան հատվածը.

«...Թո՛ղ Հայոց երկիրը ազատ լինի, այնուհետև իմ տանջանքները կթեթևանան այդ մթին բանտում:»[1]

Ամուսնու՝Արշակ Երկրորդի բախտից քիչ բանով է տարբերվում կինը՝Փառանձեմ թագուհին:Սովորողները բնութագրում են Փառանձեմին որպես հայրենասեր, խելացի ,գեղեցիկ և անձնազոհ կնոջ:Կերպարի հոգեբանական զարգացումը և գործելակերպի ընթացքը մատուցվում է բնագրային մեջբերումներով:Առանձին աշակերտներ զուգահեռ են անցկացնում նրա և «Սասունցի Դավիթ» էպոսի Ծովինարի միջև՝

Փառանձեմ թագուհի

«Թող ես կորչեմ, թող ես ոչնչանամ,բայց Հայաստանը մնա»:

Ծովինար

-Որ ես էն կռապաշտ թագավոր չառնեմ,

Ձամեն տի սպանի իմ պատճառով,

---

[1]·Ռաֆֆի, Սամվել, էջ 225:

Աղեկն էն է,ե՛ս էրթամ,

Ուրիշ մարդու թող բան չըլնի:[1]

Հիմնական կերպարները բնութագրելուց հետո անդրադառնում ենք այն կերպարներին,որոնք վեպում որոշակի տեղ ունեն:

Տրվում է անհատական աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի ընթացքում ձգտում ենք զարգացնել աշակերտի ճանաչողական, տրամաբանական կարողությունները և ստեղծագործական ընդունակություններն ու երևակայությունը:

Կերպարները	Ե՞րբ ենք առաջին անգամ հանդիպում նրան	Ինչպե՞ս են նրան վերաբերվում մյուս կերպարները	Բնութագրել մեկ նախադասությամբ	Արտահայտել սեփական վերաբերմունքը
1.Աշխեն 2.Տաճատուհի 3.Հայր Մարդպետ 4.Որմիզդուխտ Այլ կերպարներ	?	?	?	?

Դասի վերջում գրատախտակին գրվում է «Որքանո՞վ փոխվեց իմ վերաբերմունքը հերոս(ներ)ի նկատմամբ » վերնագիրը և կիրառվում «5– րոպեանոց շարադրանքի» մեթոդը: Նպատակն է ամփոփել ուսումնասիրված թեման և հնարավորություն տալ աշակերտներին թեմայի վերաբերյալ իրենց մտքերն ամփոփելու և արտահայտելու:

Ռաֆֆու « Սամվել » պատմավեպի կերպարներն ուսումնասիրելիս աշակերտները կարողանում են զուգահեռներ անցկացնել Ռաֆֆու ապրած ժամանակաշրջանի և մեր օրերի միջև: Կարևորվում է հայրենասիրության արդիականությունը ,նրա դերը հայեցի կրթության և դաստիարակության գործում:

Ուսուցման նոր տեխնոլոգիաների և մեթոդների կիրառումը տալիս է գիտելիքի ձեռքբերում, կարողությունների և հմտությունների զարգացում,ազգային և համամարդկային արժեքների ճանաչում ու գնահատում:

Համագործակցային դասի պլան

Առարկան-Հայ գրականություն

Դասի թեման՝ Ռաֆֆու «Սամվել» պատմավեպի կերպարների ուսուցումը

Նպատակները՝

ա. Ակադեմիական՝

Հայրենասիրության դաստիարակում և արդիականացում: Սովորեցնել բնութագրել կերպարները: Նշել դրական և բացասական հերոսներին յուրահատուկ հատկանիշները՝ ընդգծելով հեղինակի կերպավորման արվեստին բնորոշ յուրահատկությունները:

բ. Սոցիալական՝

Հերոսների արարքների հոգեբանական շարժառիթները մեկնաբանելու և զուգահեռներ անցկացնելու, ինքնուրույն կարծիք հայտնելու կարողությունների ձևավորում: Հանդուրժողականության դրսևորում: Բանավիճելու և համագործակցային աշխատանքի հմտությունների զարգացում:

Հնարները և մեթոդները՝

«Մտագրոհ», ազատ շարադրանք, բանավեճ - քննարկում, «Քառաբաժան», փակ և բաց հարցեր...

Ուսումնական նյութեր- Ռաֆֆի,«Սամվել», Մ. Խորենացի ,«Հայոց պատմություն», Փ. Բուզանդ, «Հայոց պատմություն», Գրականագիտական բառարան, պաստառներ, գունավոր կպչուն թերթիկներ, մարկերներ, ալբոմ, լուսանկարներ...

Ակնկալվող արդյունքը –

Անկաշկանդ ելույթ ունենալու, փաստեր ներկայացնելու և տեսակետ պաշտպանելու, լսելու և բանավիճելու, ինքնուրույն անհրաժեշտ տեղեկություններ գտնելու կարողությունների զարգացում: Հետազոտական ինքնուրույն աշխատանքի մղում և գրական ճաշակի զարգացում:

Ընթացքը

Խթանման փուլ - Պահանջվում է «Մտագրոհ» հնարի օգնությամբ թվարկել «Սամվել» պատմավեպի հերոսներին, որի նպատակն է սովորողների ուշադրությունը կենտրոնացնել նյութին, խթանել նրանց հետաքրքրությունը:

Վերջիներս սկսում են թվարկել այն հերոսների անունները, որոնք առաջինն են գալիս իրենց մտքին:



Սամվել

Տարբերակել դրական և բացասական հերոսներին:

Իմաստի ընկալման փուլ - Դասարանը բաժանել 4 խմբի. յուրքանչյուր խմբին տալ համապատասխան հանձնարարություն:

1 – ին խումբ Բնութագրել դրական հերոսներին:

2 – րդ խումբ Սամվելի կերպարի բնութագիրը՝ ըստ գծակարգի:



3 – րդ խումբ Հայրենասիրությունը ձեռք բերովի՞ է, թե՞ ի ծնե:

Հայրենասիրության արդի դրսևորման այլ օրինակներ:

4 – րդ խումբ Ներկայացնել վեպի բացասական հերոսներին:

Աշխատանքի համար տրվում է15 րոպե:

Յուրաքանչյուր խմբի ներսում կատարել աշխատանքի բաժանում (քննարկումները վարող, դրանք գրանցող,աշխատանքը դասարանին ներկայացնող):

Աշխատանքի ժամանակ մոտենալ խմբերին և ճշտել, թե ճիշտ են հասկացել առաջադրանքը:Պարբերաբար մոտենալ նրանց և դիտել յուրաքանչյուր խմբի առաջադրանքի կատարման և խմբային համագործակցության ընթացքը:

Ծավալել քննարկումներ և հնարավորություն տալ արտահայտելու տեսակետներ,

խրախուսել բոլորի մասնակցությունը:Վերջում հարցնել՝ ինչ սովորեցին:

Կշռադատման փուլ - Այս փուլում կիրառվում է «Քառաբաժան » մեթոդական հնարը:Հանձնարարությունը անհատական է. յուրաքանչյուր աշակերտ ինքնուրույն լրացնում է քառաբաժան աղյուսակը:

Ի՞նչ էի տեսնում վեպը կարդալիս զգացողություններ. տեսողական լսողական զգացողական	Ի՞նչ էի զգում վեպը կարդալիս վերաբերմունք. հույզեր զգացմունքներ
Կապը իրական կյանքին ասոցիացիաներ առնչություններ օրինակներ	Նոր վերնագիր և խորհրդանշական նկար ընդհանրացում վերաիմաստավորում գնահատում



Աշխատանքը ավարտելուց հետո աշակերտները կարող են կարդալ իրենց գրառումները:Թեմայի վերջնական ամփոփման նպատակով որպես տնային աշխատանք հանձնարարել շարադրություն՝«Իմ սիրած հերոսը պատմավեպում» վերնագրով:

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԻ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ Է ,ՄԻ ԴԱՍԱՐԱՆ Է ,ՈՐԻ ՄԵՋ ԱՊԱԳԱ ՍԵՐՈՒՆԴԸ ԿՐԹՎՈՒՄ Է՝ԶԳՈՒՇԱՆԱԼՈՎ ԻՐ ՆԱԽԱՀԱՐՑ ՍԽԱԼՆԵՐԻՑ և ՀԵՏևԵԼՈՎ ՆՐԱՆՑ ԼԱՎ ԳՈՐԾԵՐԻ ՕՐԻՆԱԿԻՆ» ՐԱՖՖԻ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եզրափակելով «Սամվել» վեպի կերպարների ուսուցումը՝դարձյալ աշակերտների ակտիվ մասնակցությամբ բացահայտում ենք վեպի գեղարվեստական բարձր մակարդակը պայմանավորող մի կարևոր հատկանիշ,այն է՝ վեպում նկարագրված կերպարների մեծ մասի գործունեությունը, վարվելակերպն ու վարքագիծը հեղինակի կողմից համոզիչ, պատճառաբանված ներկայացնելու փաստը: Այս երևույթը բացահայտելու համար թռուցիկ կերպով անդրադառնում ենք հետաքրքիր կերպարներին և ցույց տալիս թե, ինչպես են նրանք վեպում կենդանացել,դարձել խոսուն կերպարներ: Շեշտում ենք այն հանգամանքը,որ վեպում պատկերված կերպարները՝ որպես բնավորություններ,ամբողջանում են իրենց հատուկ միջավայրում: Ցույց ենք տալիս,թե որքան հաջող է անհատականացված կերպարների լեզուն, թե հեղինակն ինչպես է յուրաքանչյուրի հոգեբանությանն ու վարքագծին համապատասխան ոճ ստեղծել:

Օգտագործված գրականության ցանկ

Ռաֆֆի, Սամվել, Երևան,1984:

Ռ. Դոլուխանյան,Պատմավեպի ուսուցումը ավագ դպրոցում,Երևան,2004:

Ա.Դոլուխանյան,Հայ գրականության դասավանդման մեթոդիկա,Երևան,2006:

Մ.Խորենացի,Հայոց պատմություն,Երևան,1981:

Փ. Բուզանդ,Հայոց պատմություն,Երևան,1987:

Սասունցի Դավիթ,Երևան,1990:

Ս.Սարինյան,Ռաֆֆի,ՀՀ ԳԱԱ հր.,Երևան,1957:

Ե.Պետրոսյան,Ռաֆֆի,Երևան,1959:

Կորյուն,Վարք Մաշտոցի,Երևան,1979:

Հ.Բախչինյան,Ս.Սարինյան,հայ գրականություն,դասագիրք հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի համար,Երևան,1993:

ԷԴ.Զրբաշյան,Հ.Մախչանյան,Գրականագիտական բառարան,Երևան,1972: